# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №7

## «23» փետվար 2026թ. № ՇՄՆ-COP17-26/01 պայմանագրի

ք.Երևան «18» «06» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.2, 2.4.1, 2.2.4 և 7.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագիրը լրացնել՝

1.1.1. վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն Հավելված №1-ի,

1.1.2. «Աուդիովիզուալ բովանդակության մշակում և արտադրություն» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նկարագրով (տեխնիկական բնութագիր)՝ համաձայն Հավելված №2-ի,

1.1.3. «Աուդիովիզուալ բովանդակության մշակում և արտադրություն» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նախահաշիվը՝ համաձայն Հավելված №3-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Կատարողը պարտավոր է Համաձայնագրի կատարման նպատակով կնքված պայմանագրերի կամ համաձայանագրերի կամ հաշիվ-ապրանքագրերի կամ երրորդ անձանց կողմից ներկայացված, Համաձայնագրով նախատեսված ծառայությունների կամ աշխատանքների գնագոյացմանը վերաբերող այլ փաստաթղթերի պատճեն, դրանք կնքելուց կամ հաստատելուց կամ ստանալուց հետո 25 (քսանհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուին:

2.3. Պատվիրատուին տրամադրել Պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի համաձայնությունը (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստանալու դեպքում)՝ Ծառայության մատուցման փուլային նկարագրի ու հանձնման-ընդունման արձանագրության վերաբերյալ:

2.4. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման նպատակով պարտավորություններ է ստանձնել երրորդ անձանց առջև, սակայն Պատվիրատուի գործողությունների կամ անգործության հետևանքով կամ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը կամ Համաձայնագիրը դադարեցնելու կամ չեղարկելու հետևանքով երրորդ անձանց առջև առաջանում են նրանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորություններ, ապա Պատվիրատուի կողմից այդ պարտավորություններն ամբողջ ծավալով ենթակա են հատուցման՝ Կատարողի կողմից հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև ստանձնած պարտավորությունների շրջանակում սեփականության իրավունքով ձեռք բերված բոլոր նյութական արժեքները (առկայության դեպքում) և արդյունքային ցուցանիշները Պատվիրատուին հանձնելու դեպքում:

2.5. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման ընթացքում հրաժարվում է այն կատարելուց, ապա Կատարողը պարտավոր է վճարել Պատվիրատուին Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև հատուցել Համաձայնագրի 1.1.4 կետով սահմանված գնման առարկան այլ անձանցից ձեռքբերման դեպքում գների դրական տարբերությունը: Սույն կետով նախատեսված դեպքերում Կողմերը կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ, որով.

ա) Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում, իսկ Պատվիրատուն ընդունում է մինչ հրաժարման կամ լուծման պահը Համաձայնագրի արդյունքները,

բ) Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին վերադարձնել Համաձայնագրի շրջանակում կատարված բոլոր վճարումները, եթե դրանք չեն ծածկում փոխադարձ հաշվարկների ակտով կատարված ծախսերը:

2.6. Կանխավճարը մարվում է մինչև Համաձայնագրով նախատեսված ծառայությունների ավարտը՝ Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով՝ հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպմամբ:

2.7. Համաձայնագրի Հավելված №3-ի «Չնախատեսված ծախսեր» տողով նախատեսված միջոցները կարող են օգտագործվել միայն փաստացի առաջացած ծախսերի ֆինանսավորման նպատակով: Ընդ որում, այդ ծախսերի իրականացման համար Պատվիրատուի նախնական համաձայնեցումը պարտադիր է: Նշված գումարի չօգտագործված մասը ենթակա է վերադարձման Պատվիրատուին: Պատվիրատուն սույն կետով նախատեսված համաձայնությունը կամ մերժումը հայտնում է Կատարողին 1 (մեկ) օրվա ընթացքում:

2.8. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

2.9. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրով նախատեսված ֆինանսական միջոցների հատկացման մասին ՀՀ կառավարության որոշման ուժի մեջ մտնելու օրը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Շրջակա միջավայրի նախարարություն** | **«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ** |
| ք.Երևան, Կառավարական տուն 3 | ք.Երևան, Նալբանդյան 25 ա, բն. 58 |
| ՖՆ գործառնական վարչություն | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011066439 | ՀՀ 1660030207649200 |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 02893152 |
| Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ | «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն |
| ***Ա.Խաչատրյան*** | ***Հ.Սիմոնյան*** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

Հավելված №1
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №7
« 23 » « փետրվարի » 2026թ. կնքված
№ «№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
***Ա.Խաչատրյան***
(ստորագրություն)
**Կ.Տ.**

**ԿԱՏԱՐՈՂ**
**ԴՈՊԻՆԳ ՍՓԵՅՍ ՍՊԸ**
տնօրեն
***Հայկ Սիմոնյան***
(ստորագրություն)
**Կ.Տ.**

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **հրավերով նախատեսված չափաբաժնի համարը** | **գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)** | **անվանումը** | **դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)** | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | | «Աուդիովիզուալ բովանդակության մշակում և արտադրություն» փուլային ծառայություններ | - | | | | | 200 772 000 | 200 772 000 | 200 772 000 | 223 080 000 | 223 080 000 | 223 080 000 | 223 080 000 | **223 080 000** |

Հավելված №2
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №7
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ | «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն |
| ***Ա.Խաչատրյան*** | ***Հ.Սիմոնյան*** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

# ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՒԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

***Լայնամասշտաբ տեղեկատվական և գովազդային արշավ՝ Հայաստանում անցկացվող COP17 համաժողովի մասին հնարավորինս լայն լսարանին տեղեկացնելու նպատակով: Միջոցառումների անցկացման վայրերի, կազմակերպչական գործընթացներում ներգրավված տրանսպորտային միջոցների և այլ տարրերի բրենդավորում:***

***Աուդիովիզուալ բովանդակության մշակում և արտադրություն***

Նպատակ

Մատուցման ենթակա փուլային ծառայության սույն նկարագիրը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1. կետի և Հավելված 1.1-ի 2-րդ կետի «բրենդինգի և ցուցանակների պատրաստում հանդիպման անցկացման ողջ տարածքում» պարբերությամբ սահմանված պահանջների կատարման նպատակով:

*COP17* հաղորդակցման ռազմավարության շրջանակում աուդիովիզուալ բովանդակությունը հանդիսանում է առանցքային հաղորդակցական գործիք, որի միջոցով ձևավորվում է միջոցառման ընկալումը, փոխանցվում են դրա արժեքները և ապահովվում է հաղորդակցության լայն և ազդեցիկ տարածումը:

Տվյալ բաղադրիչը նպատակ ունի ձևավորելու միասնական բովանդակային համակարգ, որը ապահովում է ինչպես բրենդի մեկնարկը, այնպես էլ դրա շարունակական ներկայացումը՝ տարբեր փուլերում և տարբեր լսարանների համար:

Այն ստեղծելով էմոցիոնալ կապ, ընդգծելով միջոցառման մասշտաբը և ամրապնդելով Հայաստանի դիրքը որպես միջազգային մակարդակով կազմակերպվող գործընթացի հյուրընկալող երկիր:

**Սույն նախագիծը հանդիսանում է *COP17* հաղորդակցման և առաջխաղացման միասնական ռազմավարության բաղադրիչ և իրականացվում է դրա շրջանակում՝ որպես առանցքային, բարձր ազդեցություն ունեցող** հաղորդակցական գործիք**:**

***1.*** *Բովանդակային բաղադրիչներ՝*

**1.1 Լոգոյի ներկայացման հոլովակ**

Լոգոյի ներկայացման հոլովակը հանդիսանում է *COP17* բրենդի պաշտոնական մեկնարկի հիմնական տեսողական գործիքը:

Այն ապահովում է բրենդի առաջին և ամբողջական ներկայացումը՝ բացահայտելով դրա տեսողական համակարգը, կառուցվածքը և կիրառման տրամաբանությունը: Հոլովակը ձևավորում է միջոցառման առաջին ընկալումը և հանդիսանում է հետագա հաղորդակցության հիմք:

**1.2 Մանիֆեստ-հոլովակ**

Մանիֆեստ-հոլովակը հանդիսանում է *COP17*-ի գաղափարների և նպատակների ներկայացման հիմնական բովանդակային գործիքը:

Այն կառուցվում է որպես ամբողջական պատմողական նյութ, որը միաժամանակ փոխանցում է միջոցառման արժեքները, ձևավորում է էմոցիոնալ կապ լսարանի հետ և առաջացնում է հետաքրքրություն ու սպասում միջոցառման նկատմամբ:

### 1.3 Փաստավավերագրական ֆիլմ (COP17 գործընթաց)

Փաստավավերագրական ֆիլմը նախատեսված է *COP17*-ի նախապատրաստման, իրականացման և արդյունքների ամբողջ ընթացքը ներկայացնելու համար:

Այն ապահովում է միջոցառման բովանդակային և պատմական արձանագրում՝ ձևավորելով երկարաժամկետ օգտագործման նյութ, որը կարող է կիրառվել ինչպես միջազգային հաղորդակցության, այնպես էլ ներկայացուցչական և հաշվետվողական նպատակներով:

### 1.4 Սոցիալական ազդեցության պատմությունների շարք

Սոցիալական ազդեցության պատմությունների շարքը նախատեսված է ներկայացնելու մարդկանց, համայնքների, նախաձեռնությունների և իրական օրինակների պատմություններ, որոնք իրենց գործունեությամբ նպաստում են բնության պահպանությանը, կենսաբազմազանության պահպանմանը կամ կայուն միջավայրի ձևավորմանը:

Տեսաշարքը ուղղված է՝

- բնապահպանական թեմաների հանրային ընկալման փոփոխությանը
- կենսաբազմազանության թեմայի մարդկայնացմանը
- ներգրավվածության և անձնական պատասխանատվության ձևավորմանը
- դրական և ոգեշնչող օրինակների ներկայացմանը
- սոցիալական և թվային հարթակներում օրգանական տարածման ապահովմանը

### 1.5 Բացման արարողության համար տեսանյութ

Ծառայության շրջանակում նախատեսվում է նաև աուդիովիզուալ բովանդակության մշակում և արտադրություն՝ *COP17* բացման արարողության ընթացքում ցուցադրման նպատակով:

Այս տեսանյութերը հանդիսանում են միջոցառման կարևորագույն ներկայացուցչական բաղադրիչներից մեկը և ուղղված են՝

- միջոցառման մասշտաբի և նշանակության ներկայացմանը
- Հայաստանի կերպարի ձևավորմանը միջազգային հանդիսատեսի համար
- էմոցիոնալ ազդեցության և հիշվողության ապահովմանը

Տեսանյութերը ներառում են Հայաստանի բնության, մշակույթի և կենսաբազմազանության ներկայացում՝ համադրված *COP17* բրենդի գաղափարների և բովանդակային ուղերձների հետ:

## 2. *Ստեղծագործական հայեցակարգ և սցենարային մոտեցում*

Աուդիովիզուալ բովանդակության մշակումը հիմնվում է *COP17* հաղորդակցման ռազմավարության նպատակների վրա՝ ձևավորելով բազմամիավոր բովանդակային համակարգ, որտեղ յուրաքանչյուր բովանդակային միավոր հանդես է գալիս որպես առանձին ստեղծագործական և հաղորդակցական գործիք:

Յուրաքանչյուր բովանդակային միավոր մշակվում է առանձին ստեղծագործական հայեցակարգի և սցենարային մոտեցման հիման վրա՝ ապահովելով իր հստակ դերակատարումը ընդհանուր հաղորդակցման շրջանակում:

Ստեղծագործական և սցենարային մոտեցումը կառուցվում է հետևյալ սկզբունքներով՝

- **Առանձին հայեցակարգերի վրա հիմնված համակարգ**
  - յուրաքանչյուր բովանդակային միավոր մշակվում է որպես ինքնուրույն հայեցակարգ՝ իր նպատակով, կառուցվածքով և հաղորդակցման խնդիրներով
  - բովանդակային միավորները չեն կրկնում միմյանց, այլ լրացնում են՝ ապահովելով հաղորդակցության տարբեր շերտերի ծածկում
  - ապահովվում է բովանդակության բազմազանություն՝ պահպանելով ռազմավարական նպատակների միասնական ուղղվածությունը
- **Սցենարային տարբերակված մոտեցում**
  - յուրաքանչյուր միավորի համար մշակվում է առանձին սցենար՝ համապատասխան դրա ձևաչափին և կիրառման հարթակին
  - կիրառվում են տարբեր պատմողական մեխանիկաներ՝ մանիֆեստային, փաստավավերագրական, բացատրական, կերպարային և հիբրիդ
  - բովանդակությունը կառուցվում է այնպես, որ ապահովի թե՛ տեղեկատվության փոխանցում, թե՛ էմոցիոնալ ազդեցություն
- **Ֆունկցիոնալ դերաբաշխում հաղորդակցության մեջ**
  - յուրաքանչյուր բովանդակային միավոր ունի հստակ դեր՝ բրենդի ներկայացում, գաղափարի բացահայտում, գործընթացի արձանագրում, ներգրավման ապահովում կամ տեղեկատվության պարզեցում

• միասին դրանք ձևավորում են բազմաշերտ հաղորդակցման համակարգ՝ ապահովելով ճանաճելիության բարձրացում, լսարանի ներգրավվածություն և նպատակային ընկալման ձևավորում

- **Վիզուալ և ոճական համահունչություն**
  • բոլոր բովանդակային միավորները մշակվում են *COP17* բրենդային համակարգի շրջանակում
  • ապահովվում է վիզուալ ճանաչելիություն՝ անկախ հայեցակարգերի տարբերությունից
  • կիրառվում են տարբեր արտահայտչամիջոցներ (կինեմատոգրաֆիկ, անիմացիոն, գրաֆիկական)՝ ըստ բովանդակության բնույթի
- **Բազմահարթակ կիրառելիություն**
  • բովանդակությունը նախագծվում է տարբեր հարթակներում օգտագործման տրամաբանությամբ
  • ապահովվում է ադապտացիա՝ հեռուստատեսության, թվային հարթակների, սոցիալական մեդիայի և միջոցառումների միջավայրի համար
  • ձևավորվում է շարունակական բովանդակային հոսք՝ տարբեր փուլերում հաղորդակցության ակտիվությունը պահպանելու նպատակով

Հոլովակների վերաբերյալ հավելյալ նկարագրության համար՝ կարող եք անցնել QR հղումով

*3. Արտադրական պահանջներ*

Աուդիովիզուալ բովանդակության արտադրությունը իրականացվում է որպես միասնական և բազմաշերտ արտադրական գործընթաց՝ ապահովելով տարբեր ձևաչափերի բովանդակության որակական և բովանդակային համահունչություն:

Արտադրական գործընթացը ներառում է՝

**3.1 Նախաարտադրական փուլ՝**

• յուրաքանչյուր բովանդակային միավորի ստեղծագործական հայեցակարգի մշակում՝ հաղորդակցման ռազմավարության հիման վրա
• սցենարների, սթորիբորդների և տեսողական լուծումների մանրամասն մշակում
• նկարահանման և արտադրական պլանների կազմում
• լոկացիաների ընտրություն և տեխնիկական նախապատրաստում
• դերակատարների, խոսնակների և ներգրավվող մասնագետների ընտրություն և կազմակերպում

**3.2 Արտադրական փուլ՝**

• բազմալոկացիոն նկարահանումների իրականացում
• բարձր որակի տեսաձայնային տեխնիկական ապահովում
• անիմացիոն և գրաֆիկական լուծումների մշակում
• տարբեր ձևաչափերի բովանդակային արտադրություն՝ ապահովելով դրանց համապատասխանությունը սահմանված նպատակներին

**3.3 Հետարտադրական փուլ**

• մոնտաժ և նարատիվի ամբողջական կառուցում
• գունային ուղղում՝ ապահովելով տեսողական միասնականություն
• ձայնային ձևավորում և երաժշտական լուծումների ինտեգրում
• ենթագրերի և բազմալեզու տարբերակների պատրաստում
• տարբեր հարթակների համար ադապտացված տարբերակների ստեղծում

Բոլոր բովանդակային միավորները տրամադրվում են բարձր որակի master ֆորմատներով (*4K և Full HD*), ինչպես նաև համապատասխանեցված տարբերակներով՝ տարբեր մեդիա և թվային հարթակներում օգտագործման համար:

4. *Նախագծի կազմակերպում և կառավարում*

Նախագծի արդյունավետ և համակարգված իրականացման համար նախատեսվում է կենտրոնացված կառավարման մոդելի կիրառում, որի շրջանակում իրականացվում է աուդիովիզուալ բովանդակության պլանավորումը, համակարգումը և վերահսկումը՝ գաղափարական ձևավորումից մինչև վերջնական արտադրանքի հանձնում:

Ծառայությունը ներառում է՝

❖ **Ստեղծագործական համակարգում**
- բոլոր բովանդակային միավորների ստեղծագործական ուղղության ձևավորում և վերահսկում
- միասնական նարատիվի և բովանդակային տրամաբանության ապահովում տարբեր հոլովակների միջև
- բովանդակության համապատասխանության ապահովում հաղորդակցման ռազմավարությանը և բրենդային պահանջներին

❖ **Պլանավորման և կառավարման գործընթացներ**
- ամբողջ արտադրական փաթեթի փուլային պլանավորում և ժամանակացույցի մշակում
- տարբեր բովանդակային միավորների արտադրության համաժամեցում
- ներգրավված թիմերի և ենթակապալառուների համակարգում
- որոշումների կայացման և հաստատման գործընթացների կազմակերպում

❖ **Արտադրական գործընթացների համակարգում**
- տեխնիկական առաջադրանքների մշակում և փոխանցում արտադրական թիմերին
- նկարահանման և անիմացիոն աշխատանքների վերահսկողություն
- հետարտադրական գործընթացների համակարգում
- որակի վերահսկում և համապատասխանության ապահովում հաստատված հայեցակարգերին

❖ **Բովանդակության կիրառման համակարգում**
- տարբեր հարթակների համար բովանդակության ադապտացիայի ուղղորդում
- բացման և փակման արարողությունների բովանդակության ինտեգրում ընդհանուր հաղորդակցման համակարգին
- բովանդակության օգտագործման շարունակականության ապահովում տարբեր փուլերում

5. *Ներգրավվող մասնագետներ*

Աուդիովիզուալ բովանդակության արտադրության իրականացման համար նախատեսվում է ներգրավել բազմապրոֆիլ մասնագիտական թիմ, որը ներառում է ստեղծագործական, արտադրական և տեխնիկական ուղղությունների մասնագետներ՝ ներառելով ինչպես հիմնական թիմի անդամներին, այնպես էլ ենթակապալառու կազմակերպությունների մասնագետներին՝ ապահովելով նախագծի ամբողջական իրականացում՝ գաղափարից մինչև գործառնական շահագործում:

***<u>Կառավարման և համակարգման թիմ</u>***
- Ծրագրի ղեկավար
- Աուդիովիզուալ արտադրության ղեկավար
- Բովանդակության և հաղորդակցման համակարգողներ
- Լոգիստիկ և գործառնական համակարգողներ

***<u>Ստեղծագործական թիմ</u>***
- Ստեղծագործական տնօրեն
- Արտ տնօրեն
- Ռեժիսորներ
- Սցենարիստներ
- Քոփիրայթերներ
- Սթորիբորդի նկարիչներ

***<u>Նկարահանման թիմ</u>***
- Գլխավոր օպերատոր
- Տեսախցիկի օպերատորներ
- Դրոնի օպերատորներ
- Լուսավորման մասնագետներ
- Ձայնագրող մասնագետներ
- Տեխնիկական անձնակազմ
- Ադմինիստրատոր.

***<u>Անիմացիայի և գրաֆիկայի թիմ</u>***
- 2D/3D անիմացիայի մասնագետներ
- Մոշն դիզայներներ

- Գրաֆիկական դիզայներներ
- Տեսողական էֆեկտների մասնագետներ

***<u>Հետարտադրական թիմ</u>***

- Մոնտաժողներ
- Գունային ուղղման մասնագետներ
- Ձայնային ձևավորման մասնագետներ
- Երաժշտության կոմպոզիտորներ

***<u>Լեզվական և ադապտացիոն թիմ</u>***

- Թարգմանիչներ
- Ենթագրերի մասնագետներ
- Բազմալեզու ադապտացիայի խմբագիրներ

Նախնական գնահատմամբ նախագծի տարբեր փուլերում կարող է ներգրավվել մինչև ***90*** **մասնագետ** (այդ թվում՝ ենթակապալառուների միջոցով), կախված բովանդակության ծավալից, նկարահանման աշխարհագրությունից և ներգրավված ձևաչափերից:

**Հավելվածի ֆինանսական գնահատական**

***<u>Աուդիովիզուալ բովանդակության մշակման և արտադրության</u>*** *<u>իրականացման ընդհանուր բյուջեն կազմում է մինչև 223,080,000 ՀՀ դրամ (ներառյալ հարկեր և պարտադիր այլ վճարներ): ): ՇՄ նախարարության և Կատարողի միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման վերաբաշխումներ, որը չի կարող գերազանցել Կառավարության որոշմամբ հատկացված գումարը:</u>*

Հավելված №3
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №7
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
***Ա.Խաչատրյան***
(ստորագրություն)
**Կ.Տ.**

**ԿԱՏԱՐՈՂ**
«Դոպինգ Ստեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
***Հ.Սիմոնյան***
(ստորագրություն)
**Կ.Տ.**

## ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Աուդիովիզուալ բովանդակության մշակում և արտադրություն» փուլային ծառայությունների

(ՀՀ դրամ)

| h/h | Ծառայության անվանումը | Նկարագրություն | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը (ներառյալ ԱԱՀ) | Ընդհանուր գումարը (ներառյալ ԱԱՀ) |
|---|---|---|---|---|---|---|
| **1.** | **Լոգոյի ներկայացման հոլովակ** | **80 վարկյան տևողությամբ խաղարկային և անիմացիոն կադրային համադրումով հոլովակ: 4K ֆորմատ** | **հատ** | **1** | | **12 480 000** |
| 1.1. | Սցենարի մշակում | | հատ | 1 | 2 530 000 | 2 530 000 |
| 1.2. | Հետկադրային ձայներ | հայերեն և անգլերեն | ձայն | 2 | 200 000 | 400 000 |
| 1.3. | Անիմացիա | Անիմացված կադրերի մշակում | հոլովակ | 1 | 1 100 000 | 1 100 000 |
| 1.4. | Երաժշտության ձեռքբերում | | հատ | 1 | 200 000 | 200 000 |
| 1.5. | Թարգմանության ծառայություններ | Հայերենից անգլերեն | տեքստ | 1 | 80 000 | 80 000 |
| 1.6. | Ձայնագրում | Ստուդիայի վարձակալություն | անգամ | 2 | 75 000 | 150 000 |
| 1.7. | Բեմադրող ռեժիսորի ծառայություններ | | անձ | 1 | 1 500 000 | 1 500 000 |
| 1.8. | Դրոնով նկարահանման ծառայություններ | | օր | 3 | 150 000 | 450 000 |
| 1.9. | Տեսախցիկ | | հատ / օր | 1 / 4 | 100 000 | 400 000 |
| 1.10. | Օբյեկտիվներ | | օր | 4 | 40 000 | 160 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1.11. | Եռոտանի | | հատ / օր | 1 / 4 | 15 000 | 60 000 |
| 1.12. | Ռոնին | | հատ / օր | 1 / 4 | 15 000 | 60 000 |
| 1.13. | Լուսավորման սարքավորումներ | | օր | 4 | 100 000 | 400 000 |
| 1.14. | Հնչյունային տեխնիկա | | օր | 2 | 50 000 | 100 000 |
| 1.15. | Ֆիլտր | | հատ / օր | 2 / 2 | 15 000 | 60 000 |
| 1.16. | Մոնիտոր | | հատ / օր | 1 / 2 | 15 000 | 30 000 |
| 1.17. | Ճանապարհածախս | | նախագիծ | 1 | 400 000 | 400 000 |
| 1.18. | Սնունդ | | անձ / օր | 10 / 2 | 4 000 | 80 000 |
| 1.19. | Գիշերակաց | | անձ / օր | 4 / 2 | 20 000 | 160 000 |
| 1.20. | Օպերատորի ծառայություններ | | անձ | 1 | 900 000 | 900 000 |
| 1.21. | Գեղարվեստական ղեկավարի ծառայություններ | | անձ | 1 | 700 000 | 700 000 |
| 1.22. | Գրաֆիկական դիզայների ծառայություններ | | անձ | 1 | 400 000 | 400 000 |
| 1.23. | Պրոդյուսերի ծառայություններ | | անձ | 1 | 700 000 | 700 000 |
| 1.24. | Մոնտաժի ծառայություններ | | հոլովակ | 1 | 560 000 | 560 000 |
| 1.25. | Ձայնային մշակում | | հոլովակ | 1 | 300 000 | 300 000 |
| 1.26. | Գունային մշակում | | հոլովակ | 1 | 600 000 | 600 000 |
| **2.** | **Մանիֆեստ-հոլովակ** | **Մինչև 90 վարկյան տևողությամբ խաղարկային հոլովակ: 4K ֆորմատ և Full HD** | **հատ** | **1** | | **45 240 000** |
| 2.1. | Ստեղծագործական հայեցակարգի մշակում | | հատ | 1 | 5 240 000 | 5 240 000 |
| 2.2. | Սցենարային մշակում | | հատ | 1 | 4 600 000 | 4 600 000 |
| 2.3. | Նախագծման, հետազոտության և նախապատրաստական փուլի ծախսեր | | նախագիծ | 1 | 1 400 000 | 1 400 000 |
| 2.4. | Բեմադրող ռեժիսորի ծառայություններ | | նախագիծ | 1 | 3 800 000 | 3 800 000 |
| 2.5. | Երկրորդ ռեժիսյոռ | | անձ / օր | 1 / 6 | 300 000 | 1 800 000 |
| 2.6. | Բեմադրող օպերատորի ծառայություններ | | անձ / օր | 1 / 6 | 350 000 | 2 100 000 |
| 2.7. | Երկրորդային օպերատորի ծառայություններ | | անձ / օր | 1 / 6 | 150 000 | 900 000 |
| 2.8. | Պրոդյուսերական ծառայություններ | | անձ / օր | 2 / 6 | 150 000 | 1 800 000 |
| 2.9. | Ադմինիստրատիվ թիմ | Ասիստենտ, ռաներներ, գծային պրոդյուսեր | անձ / օր | 5 / 6 | 50 000 | 1 500 000 |
| 2.10. | Դրոնով նկարահանման ծառայություններ | | օր | 3 | 150 000 | 450 000 |
| 2.11. | Տեսախցիկ | | հատ / օր | 1 / 6 | 350 000 | 2 100 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.12. | Օբյեկտիվներ | | օր | 6 | 130 000 | 780 000 |
| 2.13. | Եռոտանի (Tripod) | | անձ / օր | 1 / 6 | 15 000 | 90 000 |
| 2.14. | Գաֆեռ և ասիստենտ | | օր | 3 | 100 000 | 300 000 |
| 2.15. | Ամրակցվող խոսափող | | օր | 6 | 15 000 | 90 000 |
| 2.16. | Լուսավորման սարքավորումներ | | օր | 5 | 300 000 | 1 500 000 |
| 2.17. | Հնչյունային տեխնիկա | | օր | 3 | 100 000 | 450 000 |
| 2.18. | Ֆիլտր | | հատ / օր | 2 / 3 | 15 000 | 90 000 |
| 2.19. | Մոնիտոր | | հատ / օր | 1 / 6 | 30 000 | 180 000 |
| 2.20. | Տեխնիկ | | հատ / օր | 1 / 5 | 100 000 | 500 000 |
| 2.21. | Լուսային տեխնիկ | | հատ / օր | 1 / 5 | 100 000 | 500 000 |
| 2.22. | Տարածքի վարձակալություն | | հատ | 4 | 300 000 | 1 200 000 |
| 2.23. | Ճանապարհածախս | | նախագիծ | 1 | 1 000 000 | 1 000 000 |
| 2.24. | Սնունդ | | անձ / օր | 30 / 6 | 4 000 | 720 000 |
| 2.25. | Գրաֆիկական դիզայների ծառայություններ | | անձ | 1 | 300 000 | 300 000 |
| 2.26. | Գեղարվեստական ղեկավարի ծառայություններ | | անձ | 1 | 1 000 000 | 1 000 000 |
| 2.27. | Գլխավոր դերակատարներ | | անձ | 4 | 300 000 | 1 200 000 |
| 2.28. | Երկրորդային դերակատարներ | | անձ | 30 | 30 000 | 900 000 |
| 2.29. | Բեմադրող նկարիչ | | հոլովակ | 1 | 1 000 000 | 1 000 000 |
| 2.30. | Վարսահարդարման և գրիմ ծառայություններ | | օր | 6 | 100 000 | 600 000 |
| 2.31. | Հագուստի պատասխանատու | | օր | 6 | 100 000 | 600 000 |
| 2.32. | Բեմադրական և վիզուալ միջավայրի ձևավորման ծախսեր | Բեմական հագուստ, միջավայրերի ձևավորում, դեկորացիաների ձեռքբերում և պատվիրում | հոլովակ | 1 | 3 458 000 | 3 458 000 |
| 2.33. | Մոնտաժի ծառայություններ | | հոլովակ | 1 | 797 000 | 797 000 |
| 2.34. | Ձայնային մշակում | | հոլովակ | 1 | 500 000 | 500 000 |
| 2.35. | Գունային մշակում | | հոլովակ | 1 | 500 000 | 500 000 |
| 2.36. | Հետկադրային ձայն | | ձայն | 2 | 300 000 | 600 000 |
| 2.37. | Ձայնագրում | | հատ | 1 | 120 000 | 120 000 |
| 2.38. | Թարգմանչի ծառայություններ | | հատ | 1 | 75 000 | 75 000 |
| 2.39. | Երաժշտության ձեռքբերում | | հատ | 1 | 500 000 | 500 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **3.** | **Փաստավավերագրական ֆիլմ (COP17 գործընթաց)** | **40 րոպե տևողությամբ ֆիլմ: 4K: Հայերեն և անգլերեն/ նկարահանումները տևելու են 5 ամիս** | **հատ** | **1** | | **45 240 000** |
| 3.1. | Ստեղծագործական հայեցակարգի մշակում | | հատ | 1 | 4 240 000 | 4 240 000 |
| 3.2. | Սցենարային մշակում | | հատ | 1 | 2 900 000 | 2 900 000 |
| 3.3. | Բեմադրող ռեժիսորի ծառայություններ | | նախագիծ | 1 | 5 000 000 | 5 000 000 |
| 3.4. | Երկրորդ ռեժիսոռ | | նախագիծ | 1 | 2 500 000 | 2 500 000 |
| 3.5. | Բեմադրող օպերատորի ծառայություններ | | նախագիծ | 1 | 3 500 000 | 3 500 000 |
| 3.6. | Երկրորդ օպերատորի ծառայություններ | | նախագիծ | 1 | 2 000 000 | 2 000 000 |
| 3.7. | Պրոդյուսերական ծառայություններ | | նախագիծ | 1 | 2 300 000 | 2 300 000 |
| 3.8. | Տեխնիկ | | նախագիծ | 1 | 1 500 000 | 1 500 000 |
| 3.9. | Լուսային տեխնիկ | | նախագիծ | 1 | 1 500 000 | 1 500 000 |
| 3.10. | Դրոնով նկարահանման ծառայություններ | | օր | 5 | 50 000 | 250 000 |
| 3.11. | Ադմինիստրատիվ թիմ | Ասիստենտ և գծային պրոդյուսեր | անձ / նախագիծ | 2 | 1 000 000 | 2 000 000 |
| 3.12. | Տեսախցիկներ | | հատ/ նախագիծ | 2 | 2 500 000 | 5 000 000 |
| 3.13. | Օբյեկտիվներ | | նախագիծ | 1 | 600 000 | 600 000 |
| 3.14. | Եռոտանի (Tripod) | | նախագիծ | 1 | 150 000 | 150 000 |
| 3.15. | Ռոնին | | նախագիծ | 1 | 200 000 | 200 000 |
| 3.16. | Տեսախցիկի խոսափող (Shotgun) | | հատ/ նախագիծ | 2 | 100 000 | 200 000 |
| 3.17. | Ամրակցվող խոսափող | | նախագիծ | 1 | 120 000 | 120 000 |
| 3.18. | Լուսավորման սարքավորումներ | | նախագիծ | 1 | 600 000 | 600 000 |
| 3.19. | Հնչյունային տեխնիկա | | նախագիծ | 1 | 600 000 | 600 000 |
| 3.20. | Ֆիլտր | | հատ/ նախագիծ | 2 | 150 000 | 300 000 |
| 3.21. | Մոնիտոր | | հատ / նախագիծ | 1 | 200 000 | 200 000 |
| 3.22. | Ճանապարհածախս | | նախագիծ | 1 | 1 000 000 | 1 000 000 |
| 3.23. | Սնունդ | | անձ / օր | 10 / 12 | 4 000 | 480 000 |
| 3.24. | Գրաֆիկական դիզայների ծառայություններ | | նախագիծ | 1 | 200 000 | 200 000 |
| 3.25. | Գեղարվեստական ղեկավարի ծառայություններ | | նախագիծ | 1 | 900 000 | 900 000 |
| 3.26. | Վարսահարդարման և գրիմ ծառայություններ | | անձ / նախագիծ | 2 | 150 000 | 300 000 |
| 3.27. | Մոնտաժի ծառայություններ | | ֆիլմ | 1 | 2 000 000 | 2 000 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3.28. | Ձայնային մշակում | | ֆիլմ | 1 | 900 000 | 900 000 |
| 3.29. | Գունային մշակում | | ֆիլմ | 1 | 900 000 | 900 000 |
| 3.30. | Հետկադրային ձայն | | անձ | 1 | 800 000 | 800 000 |
| 3.31. | Խմբագիր | | նախագիծ | 1 | 500 000 | 500 000 |
| 3.32. | Լրագրող | | հարցազրույց | 10 | 50 000 | 500 000 |
| 3.33. | Ձայնագրում | | հատ | 1 | 300 000 | 300 000 |
| 3.34. | Արխիվային կադրերի ձեռքբերում | | նախագիծ | 1 | 500 000 | 500 000 |
| 3.35. | Երաժշտության ձեռքբերում | | հատ | 1 | 300 000 | 300 000 |
| **4.** | **Սոցիալական ազդեցության պատմությունների շարք** | **10 հայալեզու հոլովակ շարք 3-5 րոպե տևողությամբ 4K և նույն հոլովակների կարճ ֆորմատները սոց. Ցանցերի համար մինչև 1 րոպե:** | **հատ** | **10** | **4 368 000** | **43 680 000** |
| 4.1. | Ստեղծագործական հայեցակարգի մշակում | | հատ | 1 | 4 680 000 | 4 680 000 |
| 4.2. | Սցենարային մշակում | | հատ | 10 | 350 000 | 3 500 000 |
| 4.3. | Բեմադրող ռեժիսորի ծառայություններ | | նախագիծ | 1 | 5 000 000 | 5 000 000 |
| 4.4. | Բեմադրող օպերատորի ծառայություններ | | նախագիծ | 1 | 2 500 000 | 2 500 000 |
| 4.5. | Պրոդյուսերական ծառայություններ | | նախագիծ | 1 | 1 500 000 | 1 500 000 |
| 4.6. | Ադմինիստրատիվ թիմ | Ասիստենտ և գծային պրոդյուսեր | անձ / օր | 2 / 13 | 50 000 | 1 300 000 |
| 4.7. | Դրոնով նկարահանման ծառայություններ | | օր | 2 | 100 000 | 200 000 |
| 4.8. | Տեսախցիկ | | հատ / օր | 2 / 13 | 100 000 | 2 600 000 |
| 4.9. | Օբյեկտիվներ | | օր | 13 | 50 000 | 650 000 |
| 4.10. | Եռոտանի | | հատ / օր | 2 / 13 | 15 000 | 390 000 |
| 4.11. | Ռոնին | | օր | 13 | 19 000 | 247 000 |
| 4.12. | Տեսախցիկի խոսափող | | հատ / օր | 2 / 13 | 19 000 | 494 000 |
| 4.13. | Ամրակցվող խոսափող | | օր | 13 | 15 000 | 195 000 |
| 4.14. | Լուսավորման սարքավորումներ | | օր | 13 | 150 000 | 1 950 000 |
| 4.15. | Հնչյունային տեխնիկա | | օր | 13 | 70 000 | 910 000 |
| 4.16. | Ֆիլտր | | հատ / օր | 2 / 13 | 15 000 | 390 000 |
| 4.17. | Մոնիտոր | | հատ / օր | 2 / 13 | 15 000 | 390 000 |
| 4.18. | Տեխնիկ | | անձ / օր | 1 / 13 | 80 000 | 1 040 000 |
| 4.19. | Լուսային տեխնիկ | | անձ / օր | 1 / 13 | 80 000 | 1 040 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4.20. | Ճանապարհածախս | | նախագիծ | 1 | 1 364 000 | 1 364 000 |
| 4.21. | Սնունդ | | անձ / օր | 25 / 13 | 4 000 | 1 300 000 |
| 4.22. | Գիշերակաց | | անձ / օր | 14 / 8 | 20 000 | 2 240 000 |
| 4.23. | Գրաֆիկական դիզայների ծառայություններ | | նախագիծ | 1 | 500 000 | 500 000 |
| 4.24. | Գեղարվեստական գեղավարի ծառայություններ | | նախագիծ | 1 | 1 000 000 | 1 000 000 |
| 4.25. | Վարսահարդարման և գրիմ ծառայություններ | | անձ / օր | 2 / 13 | 50 000 | 1 300 000 |
| 4.26. | Մոնտաժի ծառայություններ | | 10 – 5 - 7 րոպե և 10 - 1 րոպե/ նախագիծ | 10 – 5 - 7 րոպե և 10 - 1 րոպե/ նախագիծ | 2 500 000 | 2 500 000 |
| 4.27. | Ձայնային մշակում | | նախագիծ | 1 | 1 400 000 | 1 400 000 |
| 4.28. | Գունային մշակում | | նախագիծ | 1 | 1 500 000 | 1 500 000 |
| 4.29. | Լուսանկարիչ | | օր | 3 | 200 000 | 600 000 |
| 4.30. | Երաժշտության ձեռքբերում | | հատ | 1 | 500 000 | 500 000 |
| 4.31. | Լրագրող | | հարցազրույց | 10 | 50 000 | 500 000 |
| **5.** | **Բացման արարողության համար տեսանյութ** | **5-7 րոպե տևողությամբ խաղարկային հոլովակ: 4K ֆորմատ: անգլերեն լեզվով** | **հատ** | **1** | | **56 160 000** |
| 5.1. | Ստեղծագործական հայեցակարգի մշակում | | հատ | 1 | 5 240 000 | 5 240 000 |
| 5.2. | Սցենարային մշակում | | հատ | 1 | 4 200 000 | 4 200 000 |
| 5.3. | Նախագծման, հետազոտության և նախապատրաստական փուլի ծախսեր | | նախագիծ | 1 | 1 500 000 | 1 500 000 |
| 5.4. | Բեմադրող ռեժիսորի ծառայություններ | | նախագիծ | 1 | 5 000 000 | 5 000 000 |
| 5.5. | Երկրորդ ռեժիսոռ | | անձ / օր | 1 / 7 | 300 000 | 2 100 000 |
| 5.6. | Բեմադրող օպերատորի ծառայություններ | | անձ / օր | 1 / 7 | 350 000 | 2 450 000 |
| 5.7. | Երկրորդ օպերատոռ | | անձ / օր | 1 / 7 | 200 000 | 1 400 000 |
| 5.8. | Պրոդյուսերական ծառայություններ | | անձ / օր | 2 / 7 | 150 000 | 2 100 000 |
| 5.9. | Ադմինիստրատիվ թիմ | Ասիստենտ, ռաներներ, գծային պրոդյուսեր | անձ / օր | 5 / 7 | 50 000 | 1 750 000 |
| 5.10. | Դրոնով նկարահանման ծառայություններ | | օր | 3 | 150 000 | 450 000 |
| 5.11. | Տեսախցիկ | | անձ / օր | 2 / 7 | 350 000 | 4 900 000 |
| 5.12. | Օբյեկտիվներ | | օր | 7 | 120 000 | 840 000 |
| 5.13. | Եռոտանի (Tripod) | | անձ / օր | 2 / 7 | 15 000 | 210 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5.14. | Գաֆեռ և ասիստենտ | | օր | 3 | 100 000 | 300 000 |
| 5.15. | Ամրակցվող խոսափող | | օր | 7 | 15 000 | 105 000 |
| 5.16. | Լուսավորման սարքավորումներ | | օր | 7 | 300 000 | 2 100 000 |
| 5.17. | Հնչյունային տեխնիկա | | օր | 3 | 100 000 | 300 000 |
| 5.18. | Ֆիլտր | | անձ / օր | 2 / 7 | 15 000 | 210 000 |
| 5.19. | Մոնիտոր | | անձ / օր | 2 / 7 | 20 000 | 140 000 |
| 5.20. | Տեխնիկ | | անձ / օր | 1 / 7 | 100 000 | 700 000 |
| 5.21. | Լուսային տեխնիկ | | անձ / օր | 1 / 7 | 150 000 | 1 050 000 |
| 5.22. | Տարածքի վարձակալություն | | հատ | 3 | 300 000 | 900 000 |
| 5.23. | Ճանապարհածախս | | նախագիծ | 1 | 1 200 000 | 1 200 000 |
| 5.24. | Սնունդ | | անձ / օր | 30 / 7 | 4 000 | 840 000 |
| 5.25. | Գիշերակաց | | անձ / օր | 15 / 3 | 20 000 | 900 000 |
| 5.26. | Գրաֆիկական դիզայների ծառայություններ | | անձ | 1 | 600 000 | 600 000 |
| 5.27. | Գեղարվեստական ղեկավարի ծառայություններ | | անձ | 1 | 1 000 000 | 1 000 000 |
| 5.28. | Գլխավոր դերակատարներ | | անձ | 2 | 300 000 | 600 000 |
| 5.29. | Երկրորդային դերակատարներ | | անձ | 20 | 30 000 | 600 000 |
| 5.30. | Բեմադրող նկարիչ | | հոլովակ | 1 | 1 000 000 | 1 000 000 |
| 5.31. | Վարսահարդարման և գրիմ ծառայություններ | | օր | 7 | 100 000 | 700 000 |
| 5.32. | Հագուստի պատասխանատու | | օր | 7 | 100 000 | 700 000 |
| 5.33. | Բեմադրական և վիզուալ միջավայրի ձևավորման ծախսեր | Բեմական հագուստ, միջավայրերի ձևավորում, դեկորացիաների ձեռքբերում և պատվիրում | հոլովակ | 1 | 4 675 000 | 4 675 000 |
| 5.34. | Մոնտաժի ծառայություններ | | հոլովակ | 1 | 1 800 000 | 1 800 000 |
| 5.35. | Ձայնային մշակում | | հոլովակ | 1 | 900 000 | 900 000 |
| 5.36. | Գունային մշակում | | հոլովակ | 1 | 1 000 000 | 1 000 000 |
| 5.37. | Հետկադրային ձայն | | ձայն | 2 | 500 000 | 1 000 000 |
| 5.38. | Ձայնագրում | | հատ | 1 | 100 000 | 100 000 |
| 5.39. | Երաժշտության ձեռքբերում | | հատ | 1 | 500 000 | 500 000 |
| 5.40. | Թարգմանության ծառայություններ | | հատ | 1 | 100 000 | 100 000 |
| | Չնախատեսված ծախսեր | | տոկոս | 10 | | 20 280 000 |
| | **Ընդհանուրը** | | | | | **223 080 000** |